№ 25 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 3 — 1892 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 3 № 25

ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՆԵՐԿԱՅ 1892 ԹԻԱԿԱՆԻՆ

20-ՐԴ ՏԱՐԻ **„ՄՇԱԿ“** 20-ՐԴ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ., մի ամսվանը՝ 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրակայա և Բաղարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը).

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal armenien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով. բառին վճարվում է 2 կոպէկ.

«Մշակի» առաջին երեսի վրա մասնաւոր յայտարարութիւններ չենք տպագրվում, այլ տպագրվում են միմիայն՝ լրագիրների յայտարարութիւնները, մահացուցակները և պաշտօնական հաստատութիւնների յայտարարութիւնները, որոնց համար կրկնակի է վճարվում: Մահացուցակի տպագրելը առաջին երեսի վրա արժէ 4 ռուբլի, իսկ չորրորդ երեսի վրա՝ 2 ռուբլի:

(№ 127) Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սմբատ Շահազիզեանի յօբելէանը.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կաթողիկոսական ընտրութիւններ. Նամակ Բաղուից. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Աշխարհականների պարտքը. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ԲՕՐՍԱ.—ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ընտրողական ձևերը Թիւրքիայում.

ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶԵԱՆԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ

Մօսկվայի հասարակութիւնը վճռել է այս տարվայ ապրիլի 9-ին տօնել Ս. Շահազիզեանի մանկավարժական գործունէութեան երեսնամեայ յօբելէանը: Ընտրված է արդէն մի յօբելէանական մասնաժողով, որը դիմել է ամէն տեղի հայ հասարակութիւններին, հրաւիրելով նրանց մասնակցել ապրիլի 9-ի տօնախմբութեանը: Վճռված է ստորագրութիւն բանալ մի գրականական ֆօնդ կազմելու համար, որի գործադրութեան եղանակը դեռ չէ որոշված:

Անկասկած մասնաժողովի հրաւէրը առանց արձագանքի չի մնայ:

Մենք Ս. Շահազիզեանի աշակերտներից շատերին ենք տեսել և չէ եղել նրանցից մէկը, որը խորին երախտագիտութեան և անկեղծ յարգանքի զգացմունքով չը յիշեր իր ուսուցչին: Նրա բոլոր աշակերտները խոստովանում են, որ նա իրանց մէջ աշխատել է միշտ զարթեցնել բարի զգացմունքներ, որ նա իրանց հետ վարվել է միշտ իբրև „մարդ“, այդ բառի բուն նշանակութեամբ: Ով որ փոքր ի շատէ ծանօթ է Ս. Շահազիզեանի հետ, չէ կարող չը զալ այն համոզմունքին, որ նա ուրիշ կերպ չէր էլ կարող վարվել իր աշակերտների հետ: Շիտակութիւն, անկեղծութիւն, ըզգացմունքների զարմանալի թարմութիւն, ջերմեռանդ համակրութիւն դէպի ամէն բան, որ առաջադիմական է, որ լուսաւոր է, որ կենսաբեր է և նոյնպիսի ատելութիւն դէպի խաւարը, հինը, փտածը, դէպի ամէն բան, որից մեռելահոտ է փչում,— Ս. Շահազիզեանի այդ յատկութիւնները, որոնք աչքի են ընկնում հէնց առաջին ծանօթութիւնից,—չեն կարող տեղ թողնել նրա սրտում անհոգի ձևականութեան ու դահճային զգացմունքներին: Ապրիլի 9-ին Ս. Շահազիզեանի բոլոր աշակերտները անշուշտ կը յիշեն իրանց ուսուցչին: Բայց այն մարդը, որ 30 տարի շարունակ տարել է բարեխիղճ ուսուցչի խաչը, որ այդքան տարիների ընթացքում համարեա ամէն օր նոյն գործով զբաղվելով, արհեստաւոր չէ դարձել, չէ կորցրել այդ գործով ոգևորվելու ընդունակութիւնը, չէ դարձել ձևապաշտ, այլ միշտ նայել է իր աշակերտների վրա իբրև զգուանքի և սիրոյ արժանի „մարդկանց“ վրա և աշխատել է բարի ու զգեցիկ սերմեր ցանել նրանց սրտերում,— այդ մարդը իրաւամբ պէտք է համարվի արժանի ամբողջ հասարակութեան երախտագիտութեան:

Բայց հայ հասարակութիւնը երախտագէտ պէտք է լինի Ս. Շահազիզեանին ոչ միայն նրա երկարատև մանկավարժական գործունէութեան համար, այլ և զլխաւորապէս այն առաջադիմական գաղափարների համար, որ նա քարոզել է իր գրուածքներում: Բանաստեղծի գրուածքների գեղարուեստական արժանաւորութիւնների որոշելը մասամբ անձնական ճաշակի գործ է: Կան մարդիկ, որոնք սիրում են թուանշաններ դնել բանաստեղծներին: Թողնելով այդ գործը մի կողմից ձեռնհասներին, միւս կողմից՝ նրանց, որոնք աւելի արդիւնաւոր գործով զբաղվելու կարիք չեն զգում, մենք, հասարակ ընթերցողներս, սովորութիւն ունենք ուշադրութիւն դարձնել զլխաւորապէս այն զգացմունքների վրա, որ զարթեցնում է մեր մէջ բանաստեղծը, այն մտքերի վրա, որ մեզ սիրել է տալիս նա և կեանքի այն երևոյթների վրա, որ նա ատելի է դարձնում մեր սրտին: Մեզ բաւական է, որ բանաստեղծը տաղանդ ունենայ, զուրկ չը լինի Աստուածային կրակից: Հեղինակի ընդունակութիւնը՝ զարթեցնել ընթերցողի սրտում իր խօսքերին համապատասխանող զգացմունքներ, հաղորդել նրան իր տրամադրութիւնը,—բաւականաչափ և անսխալ ապացոյց է տաղանդի: Որքան բարձր ու բազմակողմանի զգացմունքներ է զարթեցնում բանաստեղծը ընթերցողի մէջ, որքան լայն հորիզոններ է բացանում նա ընթերցողի մտաւոր տեսութեան առաջ, որքան խոր ու զօրեղ են լինում նրա գրուածքների ազդած տրամադրութիւնները,—այնքան աւելի մեծ ու բարձր է նրա տաղանդը: Նրբութիւնների մէջ մտնել մենք չենք կարող և աւելորդ ենք համարում: Որ Ս. Շահազիզեան տաղանդաւոր բանաստեղծ է՝ անկասկածելի է, որ նա մեր գրականութեան մէջ ամենահամակրելի տաղանդներից մէկն է՝ այդ էլ կասկածելի չէ, որ նա առաջադիմական կուսակցութեան մարտնչող բանաստեղծն է եղել—նոյնպէս անհերքելի ճշմարտութիւն է: Եւ ահա ապրիլի 9-ին հայ հասարակութիւնը մի անգամ էլ պէտք է ցոյց տայ, թէ նա արժանի է իր տաղանդներին, թէ նա գիտէ գնահատել իր առաջադիմական գրականական գործիչներին:

Տ. Ց.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«Новости» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը գրում է հետևեալը. «Բ. Դրան և հայոց պատրիարքարանի յարաբերութիւնները վերջերս շատ սուր բնաւորութիւն են ընդունել Էջմիածնի կաթողիկոսի առաջիկայ ընտրութիւնների առիթով: Մեր դեսպանութիւնը Թիւրքաց կառավարութեան ձեռքով արդէն երկու անգամ հրաւէր կարդաց հայոց պատրիարքարանին՝ պատգամաւորներ նշանակել կաթողիկոս ընտրելու համար: Եկեղեցական կանոնադրութեան համաձայն և նախկին ընտրութիւնների օրինակով, պէտք է որ այստեղ գան Թիւրքիայի բոլոր հայոց թեմերից ներկայացուցիչներ և կ. զականները Պողոսեան կուսակցութիւնից էին և այս անգամ ապօրոսեաններն են մտքումը դրել, որ անպատճառ իրանց ընտրութիւնները գլուխ բերեն:

Ընտրութիւններից մի երկու ամիս առաջ ապօրոսեանների գլխաւորները մի նիստ են կազմում ու ձայների մեծամասնութեամբ ընտրելի եօթ թաղականների ցանկը պատրաստում: Ասված է ու վճռված: Այլ ևս ոչ մի ապօրոսեան չի աշխատի այդ ցանկը քանդել ու մէջը մի ուրիշ անուն խցկել: Պէտք է ասած, որ Վանում գոյութիւն ունի նաև ապօրոսեանների մի փոքրիկ հատուած (фракція) «գարեգինեան» անունով, որը կազմակերպվել է ութսունական թուականների սկզբին յանուն Սրուանձտեան Գարեգին եպիսկոպոսի, սակայն այդ հատուածը շատ թոյլ է ու անժողովրդական: Նիստ կայացնողները, իրանց օգնականներով հանդերձ, աշխատում են այնուհետև տարածել այդ վճիռը իրանց հազարաւոր համախոհների մէջ, եռանդոտ կերպով համոզելով նրանց, պէտք եղած ժամանակ, պատրաստած ցանկի գերազանցութեան մէջ: Իսկ բուն ընտրութիւնից երկու օր առաջ պատրաստվում են մի քանի հարիւր ընտրողական տոմսակներ, որոնց վրա մի և նոյն կարգով նշանակված են վերոյիշեալ եօթ մարդկանց անունները: Եթէ կուսակցութեան պետերը հաստատ յոյս ունեն, օրինակ, վեց հարիւր համախոհ ունենալու, նրանք մի երկու հարիւր տոմսակ էլ աւելի են պատրաստում, որպէս «պաշար»: Այդ տոմսակները, որ բոլորն էլ միանման են նաև ձևի ու ծաւալի կողմից, բաժանվում են տասից մինչև քսան շնորհով ու կորիչ երիտասարդներին, որպէս զի նրանք տանեն ցրրէ, որ կենսաբեր է և նոյնպիսի ատելութիւն դէպի խաւարը, հինը, փտածը, դէպի ամէն բան, որից մեռելահոտ է փչում,— Ս. Շահազիզեանի այդ յատկութիւնները, որոնք աչքի են ընկնում հէնց առաջին ծանօթութիւնից,—չեն կարող տեղ թողնել նրա սրտում անհոգի ձևականութեան ու դահճային զգացմունքներին: Ապրիլի 9-ին Ս. Շահազիզեանի բոլոր աշակերտները անշուշտ կը յիշեն իրանց ուսուցչին: Բայց այն մարդը, որ 30 տարի շարունակ տարել է բարեխիղճ ուսուցչի խաչը, որ այդքան տարիների ընթացքում համարեա ամէն օր նոյն գործով զբաղվելով, արհեստաւոր չէ դարձել, չէ կորցրել այդ գործով ոգևորվելու ընդունակութիւնը, չէ դարձել ձևապաշտ, այլ միշտ նայել է իր աշակերտների վրա իբրև զգուանքի և սիրոյ արժանի „մարդկանց“ վրա և աշխատել է բարի ու զգեցիկ սերմեր ցանել նրանց սրտերում,— այդ մարդը իրաւամբ պէտք է համարվի արժանի ամբողջ հասարակութեան երախտագիտութեան:

Բայց հայ հասարակութիւնը երախտագէտ պէտք է լինի Ս. Շահազիզեանին ոչ միայն նրա երկարատև մանկավարժական գործունէութեան համար, այլ և զլխաւորապէս այն առաջադիմական գաղափարների համար, որ նա քարոզել է իր գրուածքներում: Բանաստեղծի գրուածքների գեղարուեստական արժանաւորութիւնների որոշելը մասամբ անձնական ճաշակի գործ է: Կան մարդիկ, որոնք սիրում են թուանշաններ դնել բանաստեղծներին: Թողնելով այդ գործը մի կողմից ձեռնհասներին, միւս կողմից՝ նրանց, որոնք աւելի արդիւնաւոր գործով զբաղվելու կարիք չեն զգում, մենք, հասարակ ընթերցողներս, սովորութիւն ունենք ուշադրութիւն դարձնել զլխաւորապէս այն զգացմունքների վրա, որ զարթեցնում է մեր մէջ բանաստեղծը, այն մտքերի վրա, որ մեզ սիրել է տալիս նա և կեանքի այն երևոյթների վրա, որ նա ատելի է դարձնում մեր սրտին: Մեզ բաւական է, որ բանաստեղծը տաղանդ ունենայ, զուրկ չը լինի Աստուածային կրակից:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՁԵՒԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

Որովհետև մենք հիմա ապրում ենք այնպիսի մի րոպէ, երբ «ընտրութիւն» բառը ստացել է խիստ ժամանակակից նշանակութիւն — աւելորդ չեմ համարում նկարագրել թէ ինչպէս են կատարվում ազգային-եկեղեցական ընտրութիւնները Ցաճկաստանում:

Ցաճկահայերը, սուլթանների իրանց շնորհած սահմանադրութեան համաձայն, կատարում են զանազան տեսակ ազգային-եկեղեցական ընտրութիւններ: Դրանցից գլխաւորն են թաղականների և զաւառական ու ազգային ժողովների պատգամաւորների ընտրութիւնները: Առայժմ ես վերցնում եմ միայն առաջին տեսակ ընտրութիւնները: Տեղի կողմից էլ վերցնում եմ Վանը և այդ համարեա թէ մի առանձին նշանակութիւն չունի, որովհետև ամէն տեղ էլ նոյն է կատարվում՝ ամենաչնչին տարբերութեամբ: Ի հարկէ, աւելի լաւ է ասել այն, ինչ որ աչքովս եմ տեսել:

Ի՞նչ բան են այդ թաղականները:

Սահմանադրութեան օրէնքով ամէն մի հայ եկեղեցու ծուխ ընտրում է իր միջից 5—9 հոգի և յանձնում նրանց, չորս տարի ժամանակով, հետևեալ գործերը:

1) Հոգացողութիւն եկեղեցու պայծառութեան մասին:

2) Կառավարչութիւն թաղի ուսումնարանի.

3) Թաղեցիների մէջ պատահած վէճերի քննութիւն և

4) Թաղի աղքատների խնամատարութիւն:

Դրանք են ահա «թաղական», այսինքն թաղի ներկայացուցիչ կոչվածները:

Վանում վաղուց ի վեր սովորութիւն է դարձել ընտրել եօթ եօթ թաղական կամ, որ նոյնն է, 49 հոգի ամբողջ քաղաքի համար, համեմատ նրա եօթ զլխաւոր եկեղեցիների ու թաղերի:

Ըստ սահմանադրութեան այդ ընտրութիւններին մասնակցում է ամէն մի հայ, որը լրացրել է իր քսանը հինգ տարին, իսկ թաղական ընտրվել կարող է միայն նա, որը պակաս չէ երեսուն տարեկանից: Այդպիսով մի ծուխ, մի ընտանիք մասնակցում է ընտրութեանը ոչ թէ միայն մի ձայնով, ինչպէս մեղանում, այլ այնքանով, որքան որ մի տան մէջ 25 տարեկանից անց մարդ կայ: Պատահում է, օրինակ, որ մի քանի հասակաւոր եղբայրներից ու նրանց հասած որդիներից բաղկացած որ և է գերդաստան ներկայանում է յանկարծ ամբողջ տաս-տասներկու ձայնով: Ուրեմն այնքան ձայն, որքան քաղաքացի, ըստ ֆրանսիական suffrage universel-ի:

Բուն ընտրութիւններից երկու շաբաթ առաջ եկեղեցու դաւթում կախում են ամբողջ թաղի ընտրողների ցուցակը այբուբենական կարգով: Աւագ քահանան ծանուցում է անում ժողովրդին այդ ցանկն աչքի անցնելու և մէջը սպրդած սխալներն օր առաջ թաղական խորհրդարանին յայտնելու: Եւ երբ բոլոր թիւրիմացութիւնները վաղօրօք բարձված վերջացած են, սկսվում են ընտրութիւնները:

Հիմա տեսնենք թէ ինչ պատրաստութիւններ են տեսնում ընտրողները:

Պէտք է ասած, որ Ցաճկաստանի բոլոր քաղաքներում միշտ անպակաս են, թէև բոլորովին տարբեր անունների տակ, աղատամիտ ու պահպանողական, առաջադէմ ու յետադէմ կուսակցութիւնները: Վանում, օրինակ, դրանք յայտնի են պօղոս-ապօղոսեան անուններով: Յետադէմների «պօղոսեան» կոչումը առաջ է եկել (մօտ 45 տարի առաջ) իրանց պարագլուխ Պողոս վարդապետի (այժմ եպիսկոպոս, Լիմի վանահայր) անունից, իսկ նրանց հակառակորդները կոչել են իրանց «ապօղոսեան», որովհետև դա նշանակում է Պողոսի հակառակորդ, այսինքն առաջադիմական կամ, աւելի ճիշդ, խրիմեանական, քանի որ դրանք իրանց գլուխ և համարեա թէ մի երկրորդ աստուած ճանաչում են Խրիմեան հայրիկին:

Վանի բոլոր «քաղաքացիք», շատ անշնչան բացառութեամբ, ոտով գլխով պատկանում են այդ երկու կուսակցութիւններից մէկին կամ միւսին: Նոյնպէս և քաղաքի ամէն մի թաղ, այսինքն քաղաքի եօթ զլխաւոր բաժիններից ամէն մէկը, ներկայացնում է այդ երկու ախոյեան բանակների հանդիսարան: Բայց, ի հարկէ, կայ թաղ, որտեղ բացարձակապէս տիրապետում է պօղոսականութիւնը, կայ թաղ բոլորովին հակառակը և կայ նաև այնպիսի թաղ, որտեղ բաղդը մի որոշ հաւասարակշռութիւն է պահպանել երկու ոսոխ ոյժերի մէջ:

Մենք վերցնենք այդ վերջին տեսակ թաղերից մէկը:

Այդ թաղի անունը թող լինի, դիցուք, Արարք:

Երևակայենք որ Արարքի նախորդ տարվայ թաղականները Պողոսեան կուսակցութիւնից էին և այս անգամ ապօրոսեաններն են մտքումը դրել, որ անպատճառ իրանց ընտրութիւնները գլուխ բերեն:

Ընտրութիւններից մի երկու ամիս առաջ ապօրոսեանների գլխաւորները մի նիստ են կազմում ու ձայների մեծամասնութեամբ ընտրելի եօթ թաղականների ցանկը պատրաստում: Ասված է ու վճռված: Այլ ևս ոչ մի ապօրոսեան չի աշխատի այդ ցանկը քանդել ու մէջը մի ուրիշ անուն խցկել: Պէտք է ասած, որ Վանում գոյութիւն ունի նաև ապօրոսեանների մի փոքրիկ հատուած (фракція) «գարեգինեան» անունով, որը կազմակերպվել է ութսունական թուականների սկզբին յանուն Սրուանձտեան Գարեգին եպիսկոպոսի, սակայն այդ հատուածը շատ թոյլ է ու անժողովրդական: Նիստ կայացնողները, իրանց օգնականներով հանդերձ, աշխատում են այնուհետև տարածել այդ վճիռը իրանց հազարաւոր համախոհների մէջ, եռանդոտ կերպով համոզելով նրանց, պէտք եղած ժամանակ, պատրաստած ցանկի գերազանցութեան մէջ: Իսկ բուն ընտրութիւնից երկու օր առաջ պատրաստվում են մի քանի հարիւր ընտրողական տոմսակներ, որոնց վրա մի և նոյն կարգով նշանակված են վերոյիշեալ եօթ մարդկանց անունները: Եթէ կուսակցութեան պետերը հաստատ յոյս ունեն, օրինակ, վեց հարիւր համախոհ ունենալու, նրանք մի երկու հարիւր տոմսակ էլ աւելի են պատրաստում, որպէս «պաշար»: Այդ տոմսակները, որ բոլորն էլ միանման են նաև ձևի ու ծաւալի կողմից, բաժանվում են տասից մինչև քսան շնորհով ու կորիչ երիտասարդներին, որպէս զի նրանք տանեն ցրր-

Պոլսի ներկայացուցիչների հետ միասին պէտք է Թիւրքաց հայերի ներկայացուցիչներից ընդհանուր ժողով կազմեն և պատգամաւորներ նշանակեն Էջմիածնի համար, որոնք, ռուսահպատակ հայերի ներկայացուցիչների հետ միասին պէտք է երեք կանդիդատներ ընտրեն՝ լուսաւորչական եկեղեցու ծայրագոյն պետի պաշտօնի համար: Կանդիդատներից մէկի վերջնական ընտրութիւնը թողնւում է մեր կառավարութեան բարեհայեցողութեանը: Սակայն Թիւրքաց կառավարութիւնը ամեն ջանք գործ է դնում, որպէս զի Թիւրքահայերի բոլոր ներկայացուցիչների ընդհանուր ժողովը չը կայանայ Կ. Պոլսում, կարծելով, որ այդ ժողովը Ազգային ժողովի կերպարանք կընդունի՝ քաղաքական բնաւորութեամբ, որից Բ. Դուռը շատ վախենում է, լաւ յիշելով հայկական նորերս տեղի ունեցած աղմուկները, որոնք այնքան անախորժութիւնների պատճառ դարձան: Մանաւանդ դէմ է այդ մտքին հայկական գործերի հետ լաւ ծանօթ՝ ոստիկանութեան մինիստր Նաղիմ-բէյ, որը հայկական գործերում սուլթանի անսահման վստահութիւնն է վայելում: Նաղիմ-բէյ կտրական կերպով յայտնել է, որ հայկական մի այդպիսի համագումար ժողով Կ. Պոլսում ակնյայտնի ապացոյց կը լինի այն դաղափարի, որ պատրիարքարանը իր արտօնութիւններով և հայազգի ներկայացուցիչներով ներկայացնում է մի տեսակ պետութիւն պետութեան մէջ: Այդ բոլոր հանգամանքներն ի նկատի ունենալով, Թիւրքաց կառավարութիւնը թոյլ է տալիս հայերին պատգամաւորներ ընտրել Էջմիածնի համար մասնաւոր ժողովներում, բայց լսել անգամ չէ ուզում ընդհանուր ժողով կազմելու մասին: Ամեն յարմար դէպքում ճնշելով այդպիսով հայոց պատրիարքարանի վաղուց ի վեր ունեցած արտօնութիւնները, Թիւրքաց կառավարութիւնը յոյս ունի վերջնականապէս սպանել հայերի տենչացած դաղափարները: Հայերն ևս, իրանց կողմից, շատ լաւ են հասկանում Թիւրքաց կառավարութեան միտքը և պահանջում են, որ իրանց նախկին արտօնութիւնները անձեռնմխելի մնան:

Խորէն Աշրգեան պատրիարքը, դանվելով մի կողմից մեր դեսպանութեան ադդեցութեան տակ, որը չտապեցնում է պատգամաւորներ նշանակել կաթողիկոսի ընտրութեան համար, իսկ միւս կողմից Բ. Դրան դիմադրութիւնը տեսնելով, որը թոյլ չէ տալիս ընդհանուր ժողով կազմել, չը գիտէ ինչ անէ և մտադրութիւն ունի հրաժարվել պատրիարքական դահից: Գործին տեղեակ մի քանի անձանց կարծիքով, սուլթանը հաւատացած լինելով Խորէն Աշրդեան պատրիարքի հաւատարմութեան վրա, քանը կուզի չի հասցնի և շուտով համաձայնութիւն կը կայացնէ պատրիարքարանի հետ, օգուտ քաղելով այժմեան պատրիարքի բարեկամութիւնից:»

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Փետրվարի 26-ին

Անցեալ նամակով յայտնել էի ձեզ, որ Բագուի վաճառական պարոն Աւետիս Ղուկասեանց իր ամբողջ կարողութիւնը կտակեց ազգային զանազան հիմնարկութիւններին: Կտակի բոլոր մանրամասնութիւնները դեռ յայտնի չեն. առ այժմ յայտնիները հետևեալներն են:

Բագուի Մարդասիրական ընկերութեանը 10,000 ռուբլի, Բագուի Աղքատասիրաց ընկերութեանը 1000 ր., Բագուի Շամախու թաղում մէկ եկեղեցի կառուցանելու համար 25,000 ր., Բագուի ճիւղին ռուսաց «Св. Нина» ընկերութեանը 1500 ր., Շուշու հոգևոր դպրոցին 2000 ր., Լազարեան ճեմարանին (3 հատ որդեգիրներ պահելու համար) 20,000 ր., Երուսաղէմի վանքին 1000 ր., Ղուբայի Քիլվար և Խաչմազ գիւղական 2 դպրոցներին 2000 ր., իր ազքատ ազգականներին 50,000 ր., Էջմիածնի ճեմարանին 7,500 ր., «Առափելեանց և ընկ.» առևտրական տան մէջ ունեցած իր մասը, որի, այսինքն իր մասի հիմնական դրամագլխի գումարն առ 1-ն յունվարի 1892 թիւ հաւասարում է 150,000 ռուբլու—մնայ ընկերութեան մէջ մինչև 5 տարի և ամեն տարվայ օգուտը (девидендъ) դրամագլխի վրա աւելացնելով, 5 տարուց յետ ամբողջ գումարը (որը պիտի լինի մօտ 400,000 ր.) թողնել կաթողիկոսի իրաւասութեան տակ այն պայմանով, որ ուր որ յարմար գտնվի մէկ միջնակարգ դպրոց հիմնվի այս գումարով:

***

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, մարտի 1-ին

Երէկ Թիֆլիսի նահանգական դատարանից ստացայ՝ անանուն Թերթի խմբագրի կողմից ինձ դէմ տուած դանգատի վճիռը, որի առիթով հարկաւոր եմ համարում մի քանի խօսք ասել:

Կային մարդիկ, որոնք դիմում էին ինձ հարցնելով, թէ միթէ յիրաւի դատարանում ասել եմ, որ իմ գրածի մէջ ի նկատի չեմ ունեցել գանգատաւոր Սպանդարեանին: Ես արդէն հրապարակով պատասխանեցի, թէ դատարանում իմ բերանից ինչ խօսքեր եմ արտասանել: Աւելի կասեմ: Ցանձնելով փաստաբանին իմ գործի պաշտպանութիւնը, ես տուեցի նրա ձեռքը բաւական գրաւոր փաստեր: Պաշտպանն ինձ ասում էր. «եթէ մինչև անգամ ոչինչ փաստ էլ չը լինի, այնուամենայնիւ դատարանը անպատճառ կարդարացնի ձեզ, որովհետև այն բանը, որի մէջ ձեզ մեղադրում են, վաղուց գրել են միւս լրագիրները, և դուք միայն ուրիշների գրածը և ասածն էք կրկնել»: Եւ պաշտպանը, ինչպէս ինքն էր ասում, դրա վրա էլ պէտք է հիմնէր իր պաշտպանութիւնը. այդ պատճառով էլ խորհուրդ տուեց իմ կողմից ոչ մի վկայ չը ներկայացնել: Սակայն, ինձ անհասկանալի պատճառով և անսպասելի կերպով, իմ պաշտպանը բոլորովին ուրիշ հիմքերի վրա դրեց գործը, աշխատելով միայն մի բանի մասին,—այն է ինձ արդարացնել տալ: Եւ փաստաբանը հասաւ իր նպատակին, որը բոլոր փաստաբանների գլխաւոր նպատակն է:

Սակայն մի գլխաւոր խնդիր, որը սերտ կերպով կապված է իմ գործի հետ, և որի հետևանքին անհամբեր սպասում էին շատերը, էլի մնաց մթութեան մէջ, և անորոշ: Խօսքը Զէյթունի փողերի մասին է, որի հարցը նահանգական դատարանում չը քննվեց: Այդ փողերի հարցը վերջ ի վերջոյ պէտք է պարզվի, որպէս զի հասարակութիւնը վերջնականապէս իմանայ, թէ յիրաւի ով է մեղաւորը.գուցէ և պ. Սպանդարեան չէ մեղաւոր:

Ուստի, մի անգամ ընդ միշտ Զէյթունի փողերի խնդիրը պարզելու համար, հրապարակով դիմում եմ պ. Սպանդար Սպանդարեանին, առաջարկելով նրան վերադանդատվել, և ինձ դէմ տուած գանգատը անցկացնել դատաստանական պալատը:

Խ. Մալումեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երէկ, մարտի 2-ին, Նորին Կայսերական Մեծութեան Թագաւոր Կայսրի գահակալութեան օրը լինելով, ԹԻՖԼԻՍԻ բոլոր փողոցները զարդարված էին դրօշակներով: Սիօնի մայր-եկեղեցում գոհացողական մաղթանքներ կատարվեցան բարձրաստիճան անձանց և բազմաթիւ աղօթողների ներկայութեամբ: Երեկոյեան քաղաքը լուսաւորված էր:

—

«Մշակի» ներկայ համարը տպագրում ենք նոր ձուլած տառերով և նոր փորագրված վերնագրով:

—

Փետրվար կամ մարտ ամսից «Մշակին» գրվել ցանկացողները պէտք է վճարեն 9 ռուբլի:

—

Յունվարի 6-ի աղետից վնասվածների օգտին հետևեալ անձինք ուղարկել են մեզ հետևեալ գումարները. Թիֆլիսաբնակ Դաւիթ Բարսեղեանց 1 ռուբլի, Գանձակից՝ օրիորդ Ս. Մէլիք-Մնացականեանց, մի խումբ օրիորդներից հանգանակած 10 ռուբլի, Սարիզամիչից մի խումբ երիտասարդներ 17 ռուբլի, Բագուից՝ Ա. Ծատուրեանի և ընկ. գործարանի գործակատարներ և արհեստաւորներ 38 ռուբլի 60 կօպ., ընդամենը 66 ր. 60 կ., իսկ նախկին 445 ր. 22 կ. գումարի հետ, ունենք այժմ 511 ր. 88 կօպէկ:

—

Մինչև այժմ յայտնի են «Մշակի» կուսակցութեան թեկնածուները կաթողիկոսական դահի վրա, նմանապէս և թեմական պատգամաւորի թեկնածուի անունը: Այն ինչ մեր հակառակ կուսակցութիւնը մինչև այժմ լուռ էր մնում և չէր յայտնում իր թեկնածուների անունները կաթողիկոսական դահի վրա և նմանապէս իր թեմական պատգամաւորի թեկնածուի անունը: Վերջապէս մենք իմացանք որ մեր հակառակ կուսակցութեան թեկնածուներն են՝ Իզմիրլեան Մատթէոս և Խաչայեան Սահակ եպիսկոպոսները: Խօսում են որ նրանց երրորդ թեկնածուն՝ Կ. Պոլսի պատրիարք Խորէն Աշրդեանն է:

—

Մեր հակառակ կուսակցութիւնը յայտնում է վերջապէս, թէև կոշմնակի կերպով, տեղական ռուս լրագրութեան միջոցով, թէ ով է իր թեմական պատգամաւորացուն. դա մեր յայտնի թատերագրող Գաբրիել Սունդուկեանցն է, որը առաջ պատկանելով «Մշակի» կուսակցութեան և մեր կուսակցութեան ձեռքով եկեղեցական պատգամաւոր ընտրված լինելով Մոսկու եկեղեցում, այժմ յանկարծ թողել է մեր կուսակցութիւնը, հրաժարվել է Խրիմեանի և Արիստակէսի թեկնածութիւնից և միացել է մեր հակառակ կուսակցութեան հետ: Այժմ պ. Սունդուկեանց իր քուէտուփն է դնում, որպէս թեմական պատգամաւոր մեր հակառակ կուսակցութեան կողմից: Այդ տեսակ վարմունք մեր թատերագրողի կողմից պատիւ չէ բերում նրա պատկառելի հասակին:

—

Մեզ գրում են ՄՕՍԿՎԱՅԻՑ հետևեալը. «Հայոց գրականութիւնը Մոսկվայում փետրվարի 10-ին արժանացաւ աւելի ևս գովասանական ատեստացիայի և աւելի էլ ձեռնհաս մարդու կողմից: Այդ օրը այստեղի համալսարանի եւրոպական գրականութեան յայտնի պրոֆեսոր Ա. Վեսելովսկիյ մի հրապարակական դասախօսութիւն կարդաց յօգուտ սովեալների՝ «Քսաներորդ դարի նախընթաց օրը» վերնագրով: Անդին բազմութիւն էր հաւաքվել լսելու վերին աստիճանի հետաքրքիր դասախօսութիւնը և ինտելիգենտութեան կողմից հաղուագիւտ բազմութիւն մինչև անգամ մայրաքաղաքի համար: Լսողների թւում մենք նկատեցինք ակադեմիկ Տիխոնրավովին, գիտնական Մուրոմցևին, հրապարակախօս Գօլցեվին (որը ի դէպ ասել՝ «Рус. Мысль», ամսագրում քաղաքական տեսութեան մէջ յաճախ խօսում է հայերի մասին), շատ պրոֆեսորներին ու գրողներին և այլն: Պ. Վեսելովսկու հրապարակական դասախօսութիւնը շուտով կը տպվի «Сѣверный Вѣстникъ» ամսագրում: Բերում եմ այստեղ բառ առ բառ այդ դասախօսութիւնից այն կտորը, որը վերաբերում է մեզ: «Ասիայի նախագահում, ասեց պ. Վեսելովսկիյ, վերջին 50 տարվայ ընթացքում վերածնվեց ու զարդացաւ հայոց գրականութիւնը, և նրա հրապարակախօսները, դրամատուրգներն ու վիպասանները, աշխատելով փոխադրել իրանց հայրենեաց ապօրոսեան ամբոխի մէջ: Երեք գիշեր շարունակ, լապտերը (ֆանարը) ձեռքերին, (քաղաքը չէ լուսաւորվում ճրագներով) նրանք ման են գալիս փողոցէ փողոց, սնէ տուն, դռները ծեծում և մի-մի տոմսակ իրանց այս ինչ ու այն ինչ ծանօթին յանձնելով՝ խորհրդաւոր կերպով աւելացնում. «Ֆլան աղայից»:

—Այքիս վրա,—պատասխանում է նրան ամբոխի որդին, մի քանի կոմպլիմենտներ անում ու գոհ սրտով ճանապարհ դնում:

Երեք գիշերվայ ընթացքում տոմսակների մի ահագին քանակութիւն այդպիսով սպառվում, տարածվում է:

Գալիս է ընտրութեան օրը, որ պէտք է լինի անհրաժեշտաբար կիրակի: Եկեղեցին լցվում է աղօթողներով, այնտեղ ասեղ գցելու տեղ չը կայ: Պատարագը, ինչպէս և միշտ, վերջանում է առաւօտեան ժամը իններին: Աւագ քահանան հրաւիրում է ժողովրդին ընտրել մի քանի ներկայացուցիչներ քուէտուփի մօտ կանգնելու համար և ապա նա, այդ ներկայացուցիչներով ու հին թաղականներով հանդերձ, մտնում է թաղական խորհրդարանի սենեակը (որը միշտ կից է եկեղեցուն) և սենեակի դուռը փակում: Սենեակում պատրաստ է արդէն դրասեղանը և նրա վրա դրված է մի՝ խուփը ծակ՝ փայտեայ տուփ: Սեղանի շուրջն են բազմում նախագահն ու ներկայ եղող «աղաներից» կամ «էֆէնդիներից» երկու երեք հոգի, իսկ մնացածները նստոտում են մի քիչ հեռու գտնված գահաւորակների վրա:

Բազի մէջ այդ միջոցին շարունակվում է աշխոյժ պրօպագանդա:

Ապա խորհրդարանում եղողներից մէկը դուրս է գալիս և ժողովրդին նախագահի կողմից յայտարարում, որ ընտրողները մէկ մէկ ներս չնորհ բերեն և իրանց տոմսերը յանձնեն: Մի րօպէ չանցած թաղական խորհրդարանում սկսվում է մի եռանդոտ ու երկարատև շարժողութիւն մինչև որ մօտ 1,000—1,500 կամ 2,000 ընտրող մէկ ներս ու դուրս անելով՝ կատարում են իրանց «քաղաքացիական» պարտականութիւնը: Ամեն մի ընտրողի ներս մտնելուն պէս սեղանի շուրջը նստող պարոնները արձանագրում են եկողի անունը և նա, մօտենալով նախագահին, իր ծալած տոմսակը տուփի մէջ է սլացնում: Ցանկացողները, անձամբ ներկայ լինելու տեղ, ուղարկում են իրանց տոմսերը մի ծրարով, որի վրա գրված է իրանց ով լինելը, բայց նրա միջի տոմսը, առանց ոչ ոքի տեսութեան ենթարկվելու, իջեցնվում է դարձեալ նոյն ընդհանուր տուփը:

Այդ առաջին գործողութիւնից յետոյ, սկսվում է տոմսակների ընթերցումն ու ձայների համարումը՝ ամեն տեղ ընդունված կարգով և ապա եզրակացութիւնը յայտնվում դուրսը սպասող հետաքրքիր և անհամբեր բազմութեան:

Մի ակնթարթում ահագին կենդանութիւն է ընկնում բազում գանվող հասարակութեան մէջ և յաղթողների հրճուանքն ու բարձրաձայն «կեցցէները» խլանում են պօղոսեանների անէծքի և հայհոյանքների մէջ....

«Ցուր ու դիմոցն» էլ շատ անսովոր չէ այդ «բազմախորհուրդ» րօպէներին....

Ապօղոսեանները խսկոյն խմբերի բաժանվելով, ընկնում են փողոցէ փողոց ու մտնում նորընտիր թաղականների տները, նրանց «իշխանութիւնը» չնորհաւորելու: «Իշխան» անունը կրելու մեծ իրաւունքը ամեն մի վանեցու համար սկսվում է այն րօպէից, երբ նա արժանանում է «թաղական», կամ եկեղեցու երեցփոխ ընտրվել: Շնորհաւորելը հասարակ կերպով չէ անցնում. իշխանի սուրը պարտականութիւնն է մի ճոխ սեղան վաղօրօք պատրաստած ունենալ՝ բոլոր չնորհաւորողներին, այսինքն մի քանի հարիւր համախոհներին վայելչապէս պատուասիրելու համար: Ամբողջ թաղի կանայք հաւաքված են նրա խոհանոցում բանելու, ընտրողների առաջ նրա երեսը պարզ դուրս բերելու:

Այդպէս ուրեմն, մօտ քսան հոգուց բաղկացած մի խումբ նստում է ձեռաց սեղանի, մի լաւ «իշտահալի» ճաշում, կամ նախաճաշում, գինու և արաղի գաւաթները դատարկում, նորընծայ «իշխանին» երկար օրեր մաղթում, նրա պառաւ մօրը դուրս կանչում ու նրա ուրախութեան արտասուքները տեսնում, իրանց հակառակորդների հացէին մի քանի կծու կատակներ ուղղում և ապա՝ «չէն կենայ մեր այս ինչ աղան» ասելով, տեղ տալիս նոյնչափ հոգուց բաղկացած մի ուրիշ խմբի և քայլերն ուղղում դէպի մերձակայ փողոցի միւս նոր «իշխանը».....

Նոյն կեր ու խումը, իր բոլոր մանրամասնութիւններով, կրկնվում է և երկրորդ, և երրորդ, և մինչև եօթներորդ իշխանի մօտն էլ, ուր հաղիւ հաղ վերջանում է միմիայն կէս գիշերին:

Զը մոռանանք ասել, որ մութն ընկնելուն պէս չնորհաւորող խմբերը իրանց հետ ման են ածում նաև զուռնա-դօհոլ, սրինգ, կանոն, արմոնիկ և այլ երաժշտական գործիքներ և հանդիսաւոր օրը կրկնապատիկ զուարճալի դարձնում:

Եւ այդ ուրախութիւնները մի և նոյն կարգով տեղի են ունենում նաև քաղաքի միւս թաղերում, որովհետև թաղականների ընտրութիւնները՝ ամբողջ Վան քաղաքի համար և չորս տարի ժամանակով՝ տեղի են ունենում մի և նոյն օրը, նրա բոլոր թաղերում: Այդ հարուստ ճաշերն ու ընթրիքները սարքում են սովորաբար առաջին անգամ ընտրվողները. հին թաղականները բաւականանում են առհասարակ լոկ գինիով ու արաղով:

Հարկ է այստեղ չեշտելով ասել, որ այդ օրը ոչ ոք իրան այնքան երջանիկ չէ համարում աշխարհիս երեսին, որքան նորընծայ «իշխանների» մայրերը, որոնց կարծիքով մի մօր ամենամեծ «մուրազը», նրա երջանկութեան գագաթնակէտը, որդու իշխան դառնալն է: O, sancta simplicitas....

Ուրեմն ազգային-եկեղեցական ընտրութիւնների օրը—մեծ օր է Վասպուրականի և առհասարակ Ցանկաստանի համար:

Իմ նկարագրած ձևը ընդհանուր է, ի հարկէ, նաև միւս կուսակցութեան համար և յաղթութիւնը կախված է ոչ միայն մէկի կամ միւսի շատութիւնից, այլ և նրանց գործ դրած եռանդից և աշխատանքից:

Իմ նպատակից դուրս է առանձին կերպով խօսել այստեղ թէ այդ ընտրողական պայքարների և թէ այդ կուսակցութիւնների մասին: Ես համոզված եմ, որ «Մշակի» ընթերցողների համար շատ պարզ է, թէ ինչ ուղղութեան ու գաղափարների տէր կը լինեն Խրիմեան Հայրիկի բարեկամ և ոչ բարեկամ կուսակցութիւնները:

Տ. Փիրումեանց

նիքի հողի վրա եւրոպական քաղաքակրթութեան ստեղծագործութեան արդիւնքներից ամենալաւերը, յոյս են տալիս իրանց գրականութիւնը դարձնել լոյսի աղբիւր իրանց շրջապատող ազգութիւնների համար»:

—

Թեմիս գաւառական տեղերից արդէն սկսել են Թիֆլիս գալ գաւառական պատգամաւորները՝ մարտի 8-ի ընտրութեանը մասնակցելու համար:

—

Լսում ենք, որ դիտաւորութիւն կայ Թիֆլիսում բանալ էժանագին գրադարան՝ գլխաւորապէս վրացերէն կարդացող ժողովրդի համար:

—

Կիրակի, ամսիս 1-ին, Թիֆլիսի Ժողովարանի դահլիճում, կայացաւ Թիֆլիսի գործակատարների ընդհանուր ժողովը: Ժողովին մասնակցում էին մօտ 80 անձինք: Ժողովին նախագահեց պ. Ա. Արասխանեանց, քարտուղարն էր պ. Բ. Արուշանեան: Նախագահը յայտնեց ժողովին, որ անցեալ տարի իշխան նահանգապետին մի խնդիրք տրվեց, որով անցեալ տարվայ ժողովը խնդրում էր պ. նահանգապետից թոյլատրութիւն վերականգնելու գործակատարների դադարեցրած ընկերութիւնը հին ծրագրով, որը հաստատված է եղել Կովկասի փոխարքայի օրով, 1878 թուականից: Թիֆլիսի պ. նահանգապետը յայտնեց անցեալ դեկտեմբեր ամսին, թէ որովհետև ընկերութիւնը դադարեցրել է իր գործերը 1881 թուին, այդ պատճառով հին ծրագիրը կորցրել է իր նշանակութիւնը: Ուստի նոր կանոնադրութիւն էր պատրաստված, որը ամսիս 1-ին առաջարկվեց ժողովին կարդալու և կարծիքներ յայտնելու: Ժողովը մեծամասնութեամբ վճռեց, որ կազմվի մի մասնաժողով և այդ ծրագիրը մշակվի և ապա բոլորովին մշակված առաջարկվի ժողովին, որից յետոյ և կանոնադրութիւնը կառաջարկվի ուր հարկն է հաստատելու համար: Մասնաժողովի անդամներ ընտրվեցան՝ պ. պ. Ա. Արասխանեանց, Խ. Խաչատուրեանց, Բ. Արուշանեան, Ս. Միխայլով և Գ. Մեհրաբեան: Ցանկալի է, որ մասնաժողովի անդամները, որքան կարելի է, շուտ իրագործեն իրանց ստանձնած պարտաւորութիւնը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՐՏՔԸ

—

Երէկ խօսեցանք հոգևորականներու պարտականութեան վրա կաթողիկոսական ընտրութեան մէջ: Ժողովուրդը պէտք է ուղեցոյց ըլլայ եկեղեցականներուն. ժողովրդին տենչը, փափաքը կը հասկացուի իր ընտրած պատգամաւորներէն: Ռուսաստանի հայ եկեղեցականութիւնը որ արդէն քաջ գիտէ ժողովրդին իղձերը, ընտրուած աշխարհական պատգամաւորներէն կրնայ հասկնալ: Պիտի համակերպին ազգային բաղձանքին: Հիմա որ ո՛չ Սուքիաս եպիսկոպոս կայ, ոչ Ներսէս եպիսկոպոս, շատ իրաւունք ունինք յուսալու, որ Տեղապահ Երեմիա, Սեդրակեան Արիստակէս, Աղուանեան Գրիգոր և ասոնց նման սրբազաններն ու հայր սուրբերը ճշմարիտ եկեղեցասիրական ոգւով կը գործեն և չեն բաժնուիր աշխարհականներէն: Բարոյական ոյժը աշխարհականներուն քով է:

Սակայն այժմ Ռուսաստանի հայ եկեղեցականութիւնը պարտաւոր պիտի ըլլայ միանգամայն հաշուի առնել Տաճկաստանէն գնացող պատգամաւորներու կողմէ յայտնուած համոզումներն ու փափաքները: Տաճկաստանի հայերն իրենց աշխարհական 45 քուէներու ջախջախիչ մեծամասնութեամբ ո՛չ միայն նիւթական այլ և բարոյական ալ ահագին ոյժ կունենան: Ուրեմն այս անգամ մեր եկեղեցիի շահերու պաշտպանութիւնն յանձնուած է բոլորովին Տաճկաստանի հայոց. մեր վրա պատասխանատուութիւնը մեծ է:

Ինչ ընտրութիւններ պիտի կատարեն գաւառները: Գաւառներն իրենց քուէները տալէ առաջ պէտք է որ մտածեն թէ ինչ է կաթողիկոսի կոչումը արդի հանգամանքներուն մէջ:

Ամենապարզ իրողութիւն մը կայ, որ թէև ամենուս գիտցած բանն է, բայց մերթ ընդ մերթ յիշեցնելն աւելորդ չէ: Ամենայն հայոց կաթողիկոսը Տաճկաստանի հայոց կեանքին հետ շատ մեծ առնչութիւն չունի: Միւռոն կօրհնէ կը ղրկէ, Պոլսի պատրիարքարանէն ղրկուած վարդապետները եպիսկոպոս կը ձեռնադրէ: Երբեմն երբեմն ալ ամուսնական խնդրի մը համար Պոլսէն հարցում մը կըլլայ իրեն:

Իսկ Ռուսաստանի հայոց համար խնդիրը բոլորովին տարբեր է: Իրենց առաջնորդներն, իրենց դպրոցներն, իրենց եկեղեցիներն, իրենց բոլոր բարոյական կեանքն որուն հետ այնքան առնչութիւն ունի նիւթական կեանքն, ամենքն ալ կաթողիկոսին կը նային: Կաթողիկոսին անկեղծ եկեղեցասիրութիւնը, կաթողիկոսին խմաստութիւնը ամենամեծ բարիքներ կարտադրեն Ռուսաստանի հայոց համար. իսկ փառասէր, ակարամիտ կաթողիկոս մը, մանաւանդ այս անգամ, կործանումն է Ռուսաստանի հայոց: Արդ մեր աշխարհական պատգամաւորներն և զանոնք ընտրողներն այս կէտը պէտք չէ մոռնան:

Սակայն ասոնցմէ դուրս կայ մեր եկեղեցիի ընդհանուր պայծառութեան և բարեկարգութեան խնդիրը, խնդիր, որմէ այնքան կախում ունի մեր անհատական կեանքը:

Գաւառական ժողովներն որ այնքան մեծ կոչում ունին կաթողիկոսական արդի ընտրութեան մէջ, պէտք է որ «ահիւ և դողով» տան իրենց քուէները: Ինչպէս որ արդէն նախորդ յօդուածով ըսինք, թող չը խաբուին արտաքին երևոյթներէ, ինչպէս որ խաբուեցան շատ անգամ ընտրելով Պոլսի Ազգային ժողովին համար այնպիսի երեսփոխաններ զորս չէին ճանչնար և պարզապէս յանձնարարութեամբ ընտրեցին:

Ահա այս խորհուրդը մի անգամ ևս կրկնելու հարկին մէջ ենք: Թող զգուշանան նա մանաւանդ յանձնարարութիւններէ, և թող ընտրեն իրենց մէջէն այնպիսի պատգամաւորներ, որոնց մասին ապահով ըլլան թէ արդարև պիտի ուզեն երթալ ի սուրբ Էջմիածին:

(Հայրենիք)

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թէհրան, փետրվարի 13-ին

Յայտնի է, որ Ամերիկայի Միացեալ-Նահանգների հայ գաղթականութիւնը որոշել էր հնարհակալութեան մի ուղերձ մատուցանել պարսից վեհափառ Շահին առանձին պատուիրակի միջոցով: Պատուիրակ պ. Յովսէփ Սարրաֆեան արդէն անցեալ նոյեմբեր ամսին ժամանել էր քաղաքս, բայց ինչ ինչ հանգամանքներ արգելք եղան և վեհափառ Շահը չը կարողացաւ ունկնդրութիւն շնորհել շուտով. գլխաւորապէս, Թեհրանում ծագած խռովութիւնները Բէժիի պատճառով յետաձգել տուին այդ ունկնդրութիւնը: Ամերիկայի հայ գաղթականութեան այդ ընթացքը ինչ ինչ տարաձայնութիւնների տեղի էր տուել. հարց էր ծագել թէ ինչ հարկաւորութիւն կար մի այդ տեսակ ուղերձ մատուցանել հեռաւոր մի հայ գաղթականութեան կողմից և արդեօք այդ քայլը վիրաւորիչ չէ Պարսկաստանի հայերի հպատակասիրութեան զգացմունքի համար և չէ կարող կասկած յարուցանել, որ պարսկահպատակ հայերը ապերախտ են և անկարող գնահատել վեհափառ Շահի հայրական կառավարութիւնը, քանի որ Ամերիկայի հայերն են նրանց տեղ շնորհակալութիւն յայտնում: Ոմանք ևս երկիւղ էին կրում, որ այդ ընթացքը չը գրգռէ թիւրքաց կառավարութեան տհաճութիւնը և այդ ուղերձը չը նկատվի իբրև մի անուղղակի բողոք այդ տերութեան դէմ: Եղան և ջանքեր խափանել տալու այդ ուղերձի մատուցումը և ունկնդրութիւն ստանալը: Բայց Նասրէդդին Շահը խնդիրը աւելի լուսաւոր մտքով չօշափեց և ըմբռնեց և պատճառ չը տեսաւ մերժելու շնորհակալութեան մի ուղերձ, որ Միացեալ Նահանգների հայ գաղթականութիւնը ուղարկել էր յատուկ պատուիրակի ձեռքով, ուստի այդ պատուիրակը անցեալ յունվար ամսի 26-ին պատիւ ունեցաւ ներկայանալու նորին վեհափառութեան և ուղերձը մատուցանելու: Ընդունելով ուղերձը, Շահնշահը արժանացրեց մեծարանքի և պատուի պատուիրակ պ. Սարրաֆեանին, ուղղեց նրան մի քանի հարցմունք հայ գաղթականութեան մասին և յայտնեց, որ շուտով կը ստանայ ուղերձի պատասխանը, որի գրելը յանձնեց մեծ-վիզիր Ամին-Սուլթանին: Անցեալ օրը այդ պատասխանը յանձնվեց պ. Սարրաֆեանին պարսկերէն լեզուով գրված: Ահա նրա բառացի թարգմանութիւնը:

«Ամերիկայի Միացեալ-Նահանգների մէջ բնակվող հայոց մեծապատիւ և արժանաւոր պետերին և տեարց յայտ լինի.

«Որ ձեր կողմից ուղարկված շնորհակալութեան և երախտագիտութեան ուղերձը մեծապատիւ Յոսիոյ Յովսէփ Սարրաֆեանի միջնորդութեամբ նորին վեհափառութեան իմ օգոստափառ թագակալ տէր և բարերար արքայից արքայի (Տէրն բարձրեալ նրա թագաւորութիւնը և պետութիւնը յաւիտեան պահեսցէ ընդ իւր հովանեաւ) աչաց առջև դրվեց և նորին վեհափառութեան գոհունակութեան արժանի եղաւ: Պատգամաբերը մեծ ընդունելութիւն և շնորհ գտաւ: Ձեր այդ գոնակ երախտագիտական զգացմանց արտայայտութիւնը յաչս և ի միտս նորին արքայական մեծաշուք փառաւորութեան կարի յոյժ հաճոյական և գրուատանաց արժանի թուեցաւ և օգոստափառ իմ Տէրն հրամայեց ինձ ծանօթ առնել ձեզ, որ մեր երկրի մէջ բնակվող և եղող բոլոր ազգերի անդորրութիւնը, ազատութիւնը և ապահովութիւնը մշտապէս մեր ամենաջերմ իղձն եղած է և է, մասնաւորապէս հայ ազգը, որ ի հնուց անտի մեր պետութեան և երկրի մէջ ասպնջականութիւն և ապաւէն գտած է և մեր թագաւորների շնորհներին արժանացած և մեծ ծառայութիւններ այս մշանջենաւոր տէրութեան մատուցած է և կը մատուցանէ և այսուհետև ևս մեր կայսերական հոգածութեան և համակրանաց առարկայ պիտի լինի:

«Նորին վեհափառութիւնն ինձ հրամայեց, որ ձեր՝ մեծապատիւ պետերիդ ուղերձի պատասխանն գրելով, Նորին Կայսերական Մեծութեան առ հայ ազգն ունեցած շնորհաց և մարդասիրութեան յարատևութեան մասին հաւաստիք տամ, որպէս զի միշտ շնորհապարտ՝ Ն. Կայսերական Վեհափառութեան ամենաթանգ կենաց համար աղօթարար լինիք: Ցուվալի կոյ բաճաք 1309, ստորագրեալ է Ալի-Աղար, Ամին-Սուլթան:»

Զը բաւականանալով այդ պատասխանով վեհափառ Շահը շնորհեց պատուիրակ պ. Սարրաֆեանին Առիւծի և Արեգակի շքանշանի 4-րդ աստիճանը. ֆիրմանն երէկ մեծ վիզիրի ձեռքով յանձնվեց պարոնին:

Պ. Սարրաֆեան այս օրերս պիտի մեկնէ իր նոր հայրենիքը—Նիւ-Եօրկ:

—

Այսօր Հայկազեան ուսումնարանում հանդիսաւոր կերպով տօնվեց Վարդանանց աղջկայն տօնը:

Կաթողիկոսական պատգամաւորի հարցը դեռ մնում է անլոյծ: Սրբազան առաջնորդն ոչ մի պատասխան չը տուեց ժողովրդի ուղարկած բողոքին: Յաւալի է, որ մի ամբողջ թեմ պիտի զրկվի ամենայն հայոց հայրապետի ընտրութեան մասնակցութիւնից, որովհետև Նոր-Զուղայ գիւղաքաղաքի կողմից ընտրված պատգամաւոր պ. Յովհ. Շահնազարեան չէ կարող համարվել ամբողջ թեմի կողմից ընտրված, քանի որ այդ թեմի ժողովրդի մեծամասնութիւնը ամենևին տեղեկութիւն չունի և չէ մասնակցել նրա ընտրութեան գործին:

Հ. Առաքելեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Բերլինից հեռագրում են, որ Համբուրգում պատրաստութիւններ են տեսնվում մեծ չքով տօնել իշխան Բիսմարկի ծննդեան տօնը:

—«Gegenwart» լրագիրը յարգունիս է գրաված Գարտէնի յօդուածով Վիլհելմ կայսրին վիրաւորելու համար:

—Բուլգարական արտաքին գործերի մինիստր Դրէկով դիմեց Կ. Պոլիս մի յայտագրով, որի մէջ խնդրում է միջնորդել բուլգարական էմիգրանտներին յետ տալու համար:

—Միլան նախկին թագաւորը հանված է սերբական զօրքի ցուցակից:

—Բրիւսէլի «Ind. Belge» լրագրի Բերլինի թղթակիցը հեռագրում է փետրվարի 18-ից (մարտի 1-ին) հետևեալը. «Բերլինի ոստիկանութիւնը տեղեկութիւններ է հաւաքում հիւանդանոցներում, խառնակութիւնների ժամանակ վիրաւորված անձանց թիւը որոշելու համար: Բան հոգի բժշկվում են ստացած վէրքերից: Շուտով կը սկսվեն հասարակական աշխատանքներ՝ բանւորներին գործ տալու համար:»

—«Figaro լրագիրը դիմեց Լէվեցով, Բէյնէսբէրգէր, Բէրէլ, Ֆօլմար, Վիլբրանտ և Բրէնտանօ պատգամաւորներին և գրողներին մի հարցմունքով՝ թէ արդեօք նրանք հնարաւոր չեն համարի Ֆրանսիայի և Գերմանիայի հաշտութիւնը, եթէ Ֆրանսիան զիջանի Մաղդասկարը և Տօնկին, Էլզաս-Լոտարինգիայի փոխարէն: Վերոյիշեալ անձինքներից բացասական պատասխաններ ստացվեցան:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՎԻԵՆՆԱ, 28 փետրվարի: Անգործ բանւորները Տրիէստում երէկ մի քանի անկարգութիւններ արեցին:

ԼՕՆԴՕՆ, 28 փետրվարի: Ածխահանքագործների գործադուլն աչքի առջև ունենալով, երկաթագործարանների տէրերը Կլավէլէնդում սկսում են դադարեցնել իրանց արդիւնագործութիւնը մինչև շաբաթ: Որպէս լսվում է, 83 գործատներից դադարել են 70:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 փետրվարի: Հրատարակված է հրաման՝ Օլենեգկի նահանգում դատաստանական բէֆօրմներ մտցնել լիակատար կերպով:—Պետական խորհուրդը հաստատեց հացի պաշար պարունակող մագազիններին վերաբերեալ կանոնադրութիւնը. իւրաքանչիւր 300 ծուխ պէտք է մէկ կամ երկու մագազիններ ունենայ, բայց հացի պաշարները պէտք է նորոգվեն տասը տարին մի անգամ:—Գնդապետ Վէնդրիխին՝ նրա լաւ և դերազանց ծառայութեան և հացի տեղափոխութեան համար ցոյց տուած աշխատանքների համար շնորհված է ս. Վլադիմիրի 3-դ աստիճանի շքանշանը: Թագաւորական երկաթուղիների վարչութեան փոխ-նախագահի պաշտօնակատար Պէչկովսկիյ, իր խնդիրքի համաձայն, արձակված է ծառայութենից:

ՊԱՐԻԶ, 28 փետրվարի: «Paix» լրագրի Կ. Պոլսից ստացված հեռագրում հաղորդվում է Ստամբուլովի մահվան վերաբերեալ այնտեղ տարածված լուրը:

ՊԵՏՐՕՊԱՎԼՕՎՍԿ, 28 փետրվարի: Այստեղ ուղարկված է Ֆրէյֆելդ պաշտօնեան մի քանի տասնեակ հաղար ձիեր գնելու Եւրօպական Ռուսաստանի նահանգների անպտղաբերութիւնից վնասվածների համար: Անասատում խոտը լաւ է, ձիերը կուշտ են, կարելի է գնել 20—25 ռուբլով:

ԼՕՆԴՕՆ, 28 փետրվարի: Պարլամենտի անդամ Գաստինգս, կտակով նրան յանձնված 21,000 ֆունտ ստերլինգ սեփականացնելու համար, այսօր տաժանակիր աշխատանքներին է դատապարտված 5 տարով: Գաստինգս 67 տարեկան է:

ՆԻՑՑԱ, 29 փետրվարի: Մեծ իշխանուհի Միլիցա Նիկոլաեվնա աղջիկ բերեց:

ՊԱՐԻԶ, 29 փետրվարի: Այսօր դինամիտի պայթիւն տեղի ունեցաւ «Սէն-Ժերմէն Բէնուա» բուլվարի վրա գտնվող տան վերին յարկում, ուր բնակվում է դատարանի այն անդամը, որը նորերս «Սէն-Դէնիի» ամարխիստների գործն էր քննել: Պայթիւնը մեծ վնասներ է հասցրել. մի ծառայ վիրաւորված է: Զայնը լսվում էր 500 մետր տարածութեան վրա: Քննութիւնը կատարվում է:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 մարտի: Առանձին մասնաժողովի վերջին նիստերում, ի միջի այլոց, որոշված են միջոցներ՝ կիրգիզեան անապատներում ձեռք բերված 30,000 ձիերը բաժանելու վերաբերմամբ, անպտղաբերութիւնից վնասված տեղերի համար: Մի և նոյն ժամանակ որոշված է տալ 100,000 ռուբլի Սամարայի նահանգական մասնաժողովին, 25,000 ռ. Օրէնբուրգեան մասնաժողովին և 10,000 ռ. Պէրմի մասնաժողովին: Բարեգործական խորհրդակցութիւններին տրված է 50,000 ռ. Կազանի նահանգի կարօտեալներին տաք կերակուր տալու համար: Նիժէգօրոդեան բարեգործական խորհրդակցութիւնը տրված է 20,000 ռ. և 20,000 պուդ հաց: Կարգադրված է Պետերբուրգի բրիտանօ-ամերիկեան եկեղեցու նուիրած և Ամերիկայից ստացած ցորենը, մօտաւորապէս 220 վագոն, ուղարկել՝ Սամարայի, Սարատովի, Սիմբիրսկի, Տամբովի, Պենզայի, Նիժէգօրոդի, Օրէնբուրգի, Բեազանի, և Տուլայի նահանգները:—Փետրվարի 22-ից մինչև 28-ը մասնաժողովն ստացել է 46,000 ռուբլի:—«Гражданинъ» լրագիրը լսել է, որ մտադրութիւն կայ իրաւունք տալ հաղորդակցութեան ճանապարհների մինիստրին հաղորդակցութեան ճանապարհների ինժեների կոչում տալ այն անձանց, որոնք տեխնիկական գիտութիւնների ընթացքն աւարտել են որ և է բարձրագոյն դպրոցում, և հաստատել երկաթուղիական ծառայութեան բոլոր պաշտօններում:

ԲԵՐԼԻՆ, 1 մարտի: Կայսրը վճռեց ազատել խնամակալութիւնից Հանովերի հանգուցեալ թագաւորի կայքը, որը 1866 թուին կառավարութեան տեսչու-

թեան տակ էր և որը կազմում էր, այսպէս անուանուած, գվէլֆեան ֆօնդը, որը գործ էր դրվում զանազան գաղտնի ծախսերի համար: Կայքը վերադարձվում է Թագաւորի որդուն, Կումբէրլանդեան դքսին, որը կայսրին գրած իր նամակում յայտնում է, թէ դէպի կայսրութիւն ինքն որ և է թշնամական դիտաւորութիւններ չունի:

ԴԱՐՄՇՏԱԴ, 1 մարտի: Այսօր գիշերվայ 1 ժամին վախճանվեց Դարմշտադի մեծ դուքսը, Մեծ իշխանուհի Ելիսավէտա Ֆէօդօրօվնայի հայրը:

ԼՕՆԴՕՆ 29 փետրվարի: Նրանից յետոյ, երբ Դուրգամեան քարածխի հանքագործները, որոնց թիւը 90,000 հոգի են հաշւում, վճռեցին գործադուլ անել, վաղը կամ երկուշաբթի գործադուլ կանեն բոլորը մօտ 400,000 ածխահանքագործներ: Նօրտումբէրլանդեան հանքագործները չեն միանայ գործադուլ անողների հետ:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ.

փետրվարի 28-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ. .	97 ր. —	կ.
Բերլինի վրա 100 մարկ — . .	47 ր, 85	»
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	38 » 80	»
Ոսկի — — արժէ . .	7 » 83	»
Մաքսային կուպօններ — . .	157 » —	»
Արծաթ — — — . .	1 » 16	»
Բօրսային դիսկօնտներ — . .	$4^1/_4$ » $5^1/_2$	»
Պետ. բանկի 5⁰/₀ տոմս 1 շրջանի . .	102 » 87	»
— — — — 2-րդ — . .	102 » 87	»
— — — — 3-րդ —	— » —	»
— — — — 4-րդ —	— » —	»
— — — — 5-րդ —	— » —	»
— — — — 6-րդ —	102 » 50	»
6⁰/₀ ոսկեայ ռէնտա	159 » 50	»
4⁰/₀ ոսկեայ փոխառութիւն. . . .	— » —	»
Արևելեան 5⁰/₀ փոխառ. 1-ին շրջ.	— » —	»
— — — 2-րդ —	101 » 75	»
— — — 3-րդ —	102 » 37	»
Ներքին 5⁰/₀ առաջին փոխառութ.	236 » —	»
— — երկրորդ —	226 » —	»
Պետական երկաթուղային ռէնտա.	104 » 75	»
$5^1/_2$ ռէնտա	— » —	»
4⁰/₀ ներքին փոխառութեան . . .	94 » 12	»
5⁰/₀ գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	101 » 75	»
Ազն. կալ. բանկի խաղարկութեան Գրաւ. թղթ. — — .	198 » —	»
$5^1/_2$⁰/₀ վկայակ. գիւղ. հող. բանկի.	103 » 62	»
$4^1/_2$⁰/₀ գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ. .	148 » —	»
— — — թղթադ. .	102 » 75	»
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները. .	101 » 75	»
Մօսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	101 » 62	»
Օդէսայի — — .	101 » 50	»
Թիֆլիսի — — .	— » —	»
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	— » —	»
— — Քութայիսի — .	— » —	»

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը խաղաղ է:

Խմբագիր-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր

ՎԱՃԱՌՈՒՎՈՒՄ ԵՆ

ՆԵՐՍԷՍ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԵՒ

ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐՔԻ

ՄԵԾԱԴԻՐ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

շքեղ թղթի վրա տպագրված. իւրաքանչիւրը 25 կոպէկ՝ ճանապարհածախսով:
դիմել Тифлисъ, С. Согомонянцу, въ конторъ „Агбюръ" 1—5
(№ 25)

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻԳԱԿԱՆ ՊՐՕՖԷՍԻՕՆԱԼ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԴԱՍԵՐ.

1) Հանդերձների և սպիտակեղէնի ձևի դասեր Գլօգլինսկու մեթօդով և Շեզլէրի ֆրանսիական մեթօդով:

2) կարի դասեր մօդային ժուրնալներով:

3) Հարթակարի և զանազան ձեռագործների դասեր:

4) Դասեր տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիներ պատրաստելու համար:

Վճարը ամսական 2 րուբլի. երկու անգամ շաբաթը 5-ից մինչև 7 ժամը երեկոյեան:

Տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիները կարող են այցելել դասերը ձրի: (№ 23) 3—40

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Հ. Յ. ՕՐԲԷԼԻ

Սօլօլակսկայա փողոց, սեփական տանը №№ 15—16

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

Առաւօտեան 8 ժամից մինչև 10 ժ. և երեկոյեան 4 ժամից մինչև 6 ժ.
Կիրակի և տօն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ:
(№ 145) 26—150

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

MESSAGERIES MARITIMES

(ՄԵՍԱԺԷՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ԼՕՆԴՕՆԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Ուրբաթ, 6/18 մարտի դուրս կը գնայ ԲԱԹՈՒՄԻՑ LE CAMBODGE (ԿԱՄԲՕՋ) նաւապետ NIEL (ՆԻԷԼ) դէպի Կ. Պօլիս, Մարսէլ, Հավր, Լօնդօն, մտնելով և միջանկեալ նաւահանգիստները:

Ագէնտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ՝ ՄԱԼԱՎԱԶԻ, ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ ԳԷՈՐԳ ՀԵՋՈՒԲԵԱՆ ՀԵՋՈՒԲԵԱՆՑ, իսկ ԲԱԳՈՒԻ մէջ՝ ԳՕԼԴԼՈՒՍՏ: (№ 23) 2—2

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ սրանով տեղեկացնում է ընդհանուր գիտութեանը, որ այս 1892 թւի մարտի 3-ին, իր գրասենեակում, ցերեկվայ 12 ժամին կը կայանայ աճուրդ՝ կապալով տալու քաղաքային հողի մի կտորը 213 ք. սաժէն տարածութեամբ, փայտեր դարսելու համար, Մաքսատան դիմաց, 10-դ քաղաքամասում, որը այժմ կապալով ունի վերցրած Վասիլեյ Ռիսկին: Պայմանների մասին կարելի է տեղեկանալ վարչութեան գրասենեակում, բացի տօն օրերից, առաւօտեան 10 ժամից մինչև 2 ժամը: 2—2

ՏՐՎՈՒՄ Է վարձով 7 սենեակից բաղկացած մի ԲՆԱԿԱՐԱՆ, բոլոր յարմարութիւններով. БАРОНСКАЯ УЛИЦА, домъ № 15.
(№ 18) 5—5

(№ 19) Գ. Գ. ԼԱՐՇԷԻ ՍԵՐՄԵՐԻ ՊԱՀԵՍՏՈՒՄ Միխայլօվսկի կամուրջի վրա, մագազին № 174, ՍՏԱՑՎԱԾ ԵՆ ԹԱՐՄ ՍԵՐՄԵՐ ԲԱՆՋԱՐԵՂԷՆՆԵՐԻ ԵՒ ԾԱՂԻԿՆԵՐԻ:
Պրէյսկուրանտները ուղարկվում են ձրիապէս: 7—25

ԱՌԱՋԻՆ ՋԻԹԱՀԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ

Յ. ԹԱՅԻՐՕՎԻ ԵՒ Կ. ԱԼԻԽԱՆՕՎԻ

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Մեծ պասի համար գործարանում կայ մեծ քանակութեամբ ծախելու համար հետևեալ տեսակների ՁԷԹ. 1) ԿԵՐԱԿՐԻ՝ քունջութի, կանէփի, կտաւատի. 2) ԱՅՐԵԼՈՒ, 3) ԵՓԱԾ՝ ներկելու համար, այլ և կովեր և եզներ կերակրելու համար: Քունջութի ձէթը մաս մաս ծախվում է՝ մէկ և երկու փունտանոց ամաններում հետևեալ խանութներում. 1) Գեղատան ապրանքների կովկասեան ընկերութեան վաճառատանը. 2) Զօվանիի խանութում, Գօլօվինսկի պրօսպեկտ, տուն Դօբրժանսկու և Վօրօնցօվի արձանի մօտ. 3) Ալիխանօվի խանութում, Գօլօվինսկի պրօսպեկտ, տուն Դօբրժանսկու. 4) Միրզախանօվի խանութում, Պուշկինսկայա փողոց. 5) Բեհմանօվի խանութում, Միքայէլեան փողոց. 6) Բագարօվի խանութում, Նիկօլաեվսկայա փողոց, սեփական տուն. 7) Վարվարօվի խանութում, Գօլօվինսկի պրօսպեկտ տուն Օրբէլիանի. 8) Սարաջեվի խանութում, Գօլօվինսկի պրօսպեկտ, տուն Բաբանասօվի:

Բոլոր տեսակ ձէթերի մաս մաս վաճառումը սեփական վաճառատներում. 1) Սօլդատսկի բազար, տուն Բուդաղանօվի, մսավաճառների մօտ. 2) Թուրքաց Մայդան, քաղաքային բուտկայում. 3) Օլգինսկայա փողոց, տուն Մեբուրնութօվի, քարածուխի պահեստի կողքին և 4) Հաւլաբարի հրապարակ, քաղաքային բուտկա № 1:

Պահեստը և գրասենեակը գետեղված են Երևանեան շօսսէյի վրա, սեփական տանը:
(№ 18) 6—14 (և. շ.)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Շոգենաւերի կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ, չորեքշաբթի 25 դեկտեմբերից (6 յունվարից) սկսած և փոխադարձ

Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզօն, Սամսօն, և Կ. Պօլիս:

ԲԱԹՈՒՄԻՑ ՇՈԳԵՆԱՒԵՐԸ ԴՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ

Չորեքշաբթի, 19 փետրվարի (2 մարտի) շոգենաւ ԱՐՄԷՆԻԱ նաւապետ ՏԻԲԱԼ
— 4/16 — — ԱՆԱՏՕԼԻԱ — ԳԱՐՐԻԳ
— 18/30 — — ՄԻՆԳՐԷԼԻԱ — ԲՈՒԼԴՈՒԻՐ
— 1/13 ապրիլի — ԱՐՄԷՆԻԱ — ՏԻԲԱԼ

և այլն, երկու շաբաթ մի անգամ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ օրերը, 4 ժամին կէսօրից յետոյ:
Տօմսակների գները ուղղակի երթևեկութեան Բաթումից դէպի Պարիզ իսկական գնից պակասեցրած են:

Տեղեկութիւնների համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճեն դիմել ընկերութեան ագէնտներին. ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գարանիօնին, Նաբերէժնայա, ԹԻՖԼԻՍՈՒՄ պ. Վիկտոր Դ'ԱՐՆՕԻՆ, Միջին-փողոցում, նախկին գեներալ Տէր-Ասատուրօվի տանը, ԲԱԳՈՒՈՒՄ, Սամուէլ Դիլդարօվին, Կօլիւբիակինսկայա հրապարակ, և ՆՕՎՕՐՕՍԻՅՍԿՈՒՄ պ. Լուի Ռընօին:
(№ 124) 8—10 (և. շ.)

Մի Օտարաքաղաքացի ՏԻԿԻՆ կամենում է պարապմունք ունենալ մի որ և է խմբագրատան կամ գրասենեակում, կամ վերջապէս մի որ և է առևտրական հիմնարկութեան մէջ: Գրեք հաշւապահութիւն: Դիմել „ՄՇԱԿԻ" խմբագրութեանը:
№ 22. 4—5

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ ԱՄԲՈՂՋ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ Վ. ԱՌԻ-ՌԻԽԻ ՄՕՏ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ, կօլօկօլնայա, № 18—19:
(№ 140) 4—8 (առնի 1)

կենտրօնական գրավաճառանոցում ծախվում են

ԱՏՐՊԵՏԵԱՆԻ

Թիւրքահայերի նորագոյն կեանքից գրուածները

„Ալմաստ" վէպ . . . . . 2 րուբլի
„Խէ-կարապետ" վէպ . . . . . 1 „
„Շուշան" ողբերգութիւն (օպէրայի համար) երաժշտութիւն կարամուրզաի . 1 „
(№ 4) 7—10 (շ)

Дозволено цензурою, Тифлисъ, 2 Марта 1892 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.